

մը Տափաքընելով յանձնեց եկողներուն: Սահակ գունատ եւ տկար՝ չէր կարող ձի նստիլ, զինք ստիպուեցան ձիու վրայ կապել տախտակներու: Ախալցխա գրեթէ մօտեցած էր, երբ հոգին աւանդեց, 38 տարեկան, 3 ամսուան եւ քանի մ'օրուան, թունաւորուածի նշաններով: Պաշտօնաւարները մարմինը մերձաւոր խօշափանքը տարաւ, որ ըստ օրինի թաղուի. վանականք մերժեցին, եւ տաճիկք զինք այնտեղերը թաղեցին: Իր յիշատակը տակաւին կենդանի է տեղւոյն ժողովրդեան մէջ: Ղուկաս Աթողիկոս ինքնին կը յիշատակէ այս բանտարկութիւնը եւ ՉՍահակ խայտառակելը՝ 1791 Գեկ.ին Ախալցխացիներուն գրած նամակին մէջ (Աղանեան Գ. ՔՏ. Գիւան Գ. էջ 554):

Անտոնեան Միաբանութեան դիւանին մէջէն այս տեղեկութիւնները քաղած ժամանակ՝ հաճոյական անակնկալ մ'եղաւ ինծի Գեր. Աբրահայր Գեր. Լ. Ռափայէլ Թ. Ա. Միասերեանի կողմանէ, որ մատենադարանին մէջ կախուած շատ հին իւղաներկ պատկեր մը (41×33^5 սմ.)՝ աւանդաբար Ս. Սահակ անուամբ ճանչցուած, ներկայացուց ինծի, ետեւը հին գրով գրուած «Տէր Սահակ Ախըսխացի»:
Ասիկայ մեր Սահակ երիցուն պատկերն է, պարզ քահանայի զգեստով երիտասարդ մը, դեղին մօրուքով, աջը բռնած սկիհ մը, որուն մէջէն օձ մը կ'ելլէ, նշանակ թիւնաւորման:

Սարգիս Արքեպ. Սարաֆեանի հետ շփոթուած է դարձեալ ուրիշ Սարգիս Եպ. մը: